

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔՍ:

ԿԱՌՏԱՆԵՐՈՒԹՅՈՒՆ. ԱՊՐԵԼ 17. 1877

Աստուած միայն իրաւունք աւելնայու-
ալէս դասերու պնդողիկ, և այսպիսի
ահաւոր վճիռ տալու անեցողէ՛մ, բայց
օտուդիւ զիսեմք որ անոր վճիռը
համաձայնէ ճշմարտութեան, և ոգու-
տիրք խրատ տանուլ անկէ: Բրիտան
կ'ըսէ թէ մտքդիկ կրնան երկուս ա-
զօթնելու ընել, կրնան շատ նախան-
ձուսք ըլլալ հաւատոյ համար, կրնան
օրէնքէն սահմանելու ամէն նիւթու-
կան նուէր կամ պատարագ մասաւ-
ցանել, կրնան եկեղեցւոյ ամէն տը-
րաքին ծէն կատարել, և ասկիսին
իմերու ծնունդ ըլլալ Պօղոս առաք-
եալ կը հաստատէ նոյն վարդապե-
տաթիւնը Հռոմոյեցւոյ ինքնին
երկրորդ դիտոյն մէջ: Հոն առաք-
եալը կ'ըսէ թէ իմ ժողովարարիւնը, որ
Հրեոսկան եկեղեցւոյն մէկ դիտաւոր
ծէսն էր և նոյն իոկ Աստուծոյ տա՛հ

մանուած, «չաճ կ'ունենայ», թէ որ մարդ մը օրէնքը պահէ. բայց թէ որ օրէնքին դէմ յանցաւոր է, անոր թիւատուութիւնը անթիւաւորութիւն կ'ըլլայ: Կ'ըսէ թէ ճշմարիտ թիւատուութիւնը որով մարդ կ'ըլլայ ճշմարիտ որդի Աստուծոյ՝ մարմնոյ արտաքին թիւատուութիւնը չէ, այլ ներքին թիւատուութիւնը որ սրտին եւ հոգւոյնն է: Այսպէս յայտնի է Քրիստոսի եւ առաքելոյն վարդապետութենէն, յայտնի է նաեւ բուն իսկ ճշմարիտ բարեպաշտութեան բնութենէն թէ, մարդ մը չի կրնար ճշմարիտ որդի Աստուծոյ ըլլալ եկեղեցւոյ արտաքին ծէսերը կատարելով: Արդարեւ երախտագէտ մասօք պարտինք ընդունել Քրիստոսէ եւ անոր ներշնչեալ առաքեալներէն հաստատուած խորհուրդները, եւ հաւատարմաբար կատարել զանոնք, ջանալ նաեւ որչափ հնար է օգտիլ անոնցմէ, բայց թող ոչ ոք մենէ ինչայ դպրաց եւ փարիսեցւոց մտրութեան մէջ, ապա թէ ոչ մենք ալ մասնակից կ'ըլլանք անոնց դատապարտութեանը:

ԳԻՆԻ ԳՈՐԾԱԾԵԼ

Ի պատասխանի թղթակցի մը, որոյ նամակը վարը կըտեսնուի, հետեւեալ գիտողութիւնները կ'ընենք:

1. Մեր թղթակիցը զիտնաւու է որ, Քրիստոսեայ կոչուած երկիրներուն կառավարութիւններն անգամ օրէնքով գործադրել չեն տար Աւետարանին սկզբունքներն իրենց սկզբունքը Աւետարանի, եւ ոչ իսկ հնար է այսպէս ընել մինչ Քրիստոսեայ երկիրներուն անգամ բնակչաց շատերը սրտիւ Քրիստոսեայ չեն: Ուրախութեամբ կ'ըսենք սակայն թէ, Ամերիկայի նահանգներէն ոմանց մէջ ժողովուրդին արեւելած է արեւոյցից ըմպելիք վաճառել, բաց ի դեղափաճառներէն, ասոնք ալ բժիշկներուն հրամանաւ միայն կրնան վաճառել: Արեւելեան հոգաւորները Միացեալ Նահանգաց մէջ շատ են, եւ տարուէ տարի կ'աւելնան: Ասոնք կը ջանան բոլորովին վերցնել արեւոյցից ըմպելեաց առուտուրը, թոյլ տալով միայն զեղորէից մէջ անոնց գործածութիւնը: Անգղիոյ մէջ եւս կան շատեր որ այս ընթացքին կը նստան: Անգղիոյ խորհրդարանն անգամ դրած է օրէնք մը որ իրականացնէ մէջ կիրակի օրեր ըմպելեաց առուտուրը կ'արգելու:

2. Աստուածաշունչը չըսեր թէ զինի խմել ինքնին մեղք է: Երբ զինին զուտ է, ինչպէս էր այն զինին զոր Քրիստոս ըրաւ: Կանայի հարսանեաց մէջ, թուեալոր չէ, եւ այսպիսի զինոյ ոչ թէ գործածութիւնն՝ այլ զեղծումը մեղք է:

Նաեւ ապացոյց չիայ թէ Քրիստոսի ժամանակը ցըւոյ կամ օղւոյ պէս մեղաւ եւ կամ խորդախեալ ըմպելեաց գործածութիւնը զիտցուած էր, եւ թէ զիններբութեան չարքն այնչափ էր որչափ այժմ է: Քրիստոսի ժամանակը եւ այն պարագայի ներքեւ որոնց մէջ կը գտնուէր Քրիստոս, անոր վարքը մարդու եւ վայելուէ էր, եւ ոչ ոք իրաւունք ունի Քրիստոսի օրինակին յենով ջատագովել վարուց ընթացք մը որ ի չարն կը տանի: Գինի, միս, զարդեր եւ ուրիշ շատ բաներ գործածելու մէջ, որ ինքնին անմեղ եւ օրինաւոր են, Քրիստոս յարմար չտեսաւ իր աշակերտները որոշ կանոններով կապել, այլ ընդհանուր սկզբունք միայն

տուաւ անոնց, եւ կ'ուզէ որ Քրիստոսեայք իրենց գնացքն ուղղեն այն սկզբանց լուսով, եւ ըստ առաջնորդութեան լուսաւորեալ խղճի մտաց: Քրիստոս բաղնիկներէն, գերութեան եւ պատերազմի պէս յայտնի եւ սոսկալի չարեաց դէմ անգամ ուղղակի վճիռ չտուաւ, այլ լոկ ընդհանուր պատուէրներ տուաւ, որոնց եթէ հնազանդուի, վախճան կը տրուի այն չարեաց: Ո՛վ կրնայ համարձակիլ դատապարտել զՔրիստոս վասն զի այսպէս ըրաւ:

Մեր Տէրոջը հրաքններուն առաջինէն սորվելու դաս մը կայ նաեւ մարմնոյ խտտամբութեան դէմ: Քրիստոսի աշակերտները կանխաւ դացած էին Յովհաննու Մկրտչի քով. անոնցմէ գոնէ երկուքն աշակերտած իսկ էին Յովհաննու (Յովհ. Ա. 35), եւ անտարակոյս զգածեալ էին անոր խտամբութեան սկզբունքներէն: Քրիստոս կանայի հարսանեաց խրախուժեան երթալով, եւ հրաքով ջուրը զինոյ փոխելով, ցուցուց թէ իր վարդապետութիւնն այն մասին տարբեր էր Յովհաննու վարդապետութենէն, եւ այսպէս իր ուղակերտներուն մէջ մարմնոյ խտամբութեան միտմանց առաջն առնելու կանխեց: Մտորմնոյ խտամբութեան միտումը որ Քրիստոսն էր մէջ անգամ կանոնի տեսնուեցաւ՝ կը ցուցնէ թէ Քրիստոսի կողմանէ պէտք կար այնպիսի դասի մը, զոր Փրկիչը տուաւ երթալով Կանայի հարսնիքը:

5. Գինոյ գործածութեան մէջ հիմա մեր ընթացքն ուղղելու ճշմարիտ կանոնը տուած է մեզի Պողոս առաքեալ: «Աղէկ է միս չուտել եւ զինի չխմել, ոչ ալ բան մը ընել որով քու եղբայրդ կը դուրի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ» (Հռոմ. Ժ. 21): Տես եւ Ա. Կորնթ. Բ. 15: Առաքելոյն այս խօսքերը Քրիստոսեայ գնացքն ուղղելու համար են այնպիսի բաներու գործածութեան մէջ որ կրնան վնաս տալ ուրիշներուն, եւ անոնց մասն են Աւետարանին՝ ինչպէս նոյն իսկ Քրիստոսի խօսքերը: Դիցուք թէ դաւաթ մը զուտ զինի խմել արգելեալ չէ ոչ տասնաբանէին եւ ոչ Աւետարանին մէջ, եւ թէ մեղք չէ ինքնին: Բայց եւ այնպէս կարելի է թէ այն մէկ խմելն արգելու թեան ունակութեան տանի: Կարելի է նաեւ թէ խմելն իր այն օրինակաւ խմելու քաջալերէ ուրիշները, որ յանցախ խմելով ըլլան զինեմով եւ կորսուին: Մտածէ թէ ինչպէս խմելը շատ անգամ ցատում կը բարձրէ, երկպառակութեան եւ կռուի օրոմները կը ցանէ, ընտանիք թըշուառ կ'ընէ, այլը կը գատէ կնոջին եւ որդին՝ մօրմէն, զինեմով կը հասցնէ աղքատութեան, հիւանդութեան եւ թշուառութեան, եւ կը զրկէ անոր հոգին, երբեմն նաեւ անոր ընտանեաց հոգիները, գոյնը, Մտածէ բոլոր այս բաները, եւ ապա ըսէ թէ պարտական չեմք արդեօք զինիին ժողովալու, մինչ մեր օրինակովը կրնանք ըլլալ այնպիսի եւ այնչափ չարեաց եւ թշուառութեան պատճառ: Ուստի կը բռնաբարենք մեր խօսքն ըսելով թէ, թէ եւ զինի խմելն ուղղակի արգելեալ չէ Աւետարանին մէջ, Քրիստոսեայք ուրիշներուն դէմ օրինակ չտալու համար զինի գործածելու չեն բայց միայն հաղորդութեան ատեն, կամ երբ զեղի համար հարկ է:

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Դուրսերէն Բողոքականաց աղագապետութեանը զրկուած նամակաց տրուելու պատասխաններուն ծախքը, եւ յանձնուած գործերը տեսնելու համար նոյնպէս պէտք եղած ծախքը, նամակները զրոյններուն կամ գործերը յանձնողներուն կողմէն կանխիկ վճարուելու են:

ԱՏԱՐԱՋԱՅԻՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Տեղւոյս Հոյ Աւետարանական ժողովուրդեան երկրասարդք մօտերս բարեգործական ընկերութիւն մը կ'աղբարէն: Այս ընկերութիւնը կ'աղբարէն երկրասարդաց գլխաւոր նպատակն է միութեամբ յառաջ երթալ աստուածապաշտութեան մէջ, եւ իրենց միութեան իրենց նշան առնել անգամ մէյակէ փոքր նուէր կը պարգեւէ ընկերութեան, եւ այսպէս իրենց մէջ ուսակ հաւաքելով Աստուծոյ փառքին համար մասնաւոր բաներու կը գործածեն:

Ընկերութիւնն աստուածապաշտութեան մէջ յառաջ երթալու իրենց միջոց սահմանած է կիրակնօրեայ մասնաւոր դպրոց մը: Ընկերութեան բոլոր անդամք եւ ուրիշներ Տոգ. Սերովբէ Գալաթեանի առաջնորդութեամբ կ'ուսանին 1877 տարւոյս կիրակնօրեայ դպրոցի համար սահմանեալ դասերը: Փառաքելով որ յիշեալ դաստեօթին մէջ նշանակեալ եւսմանց հանգէտը Քրիստոնէական եղբայրակցութեան բարգաւաճման միջոց մը ընենք, այս անգամ, մարտ 26 երկուշաբթի երեկոյ ժամը մէկուէկսին չքեղ երեկոյթ մը կատարեցինք աստուածաբանական դպրոցին մէջ, ուր ներկայ էին այր եւ կին մեծ բազմութիւն: Երգեր երգուեցան, աղօթքներ եղան, ձառեր կարդացուեցան եւ անուշեղջներ բաշխուեցան հանգիստականաց: Բոլոր Աւետարանական ժողովուրդը մէջ գտնուած մեր երկրասարդ բարեկամները կը յորդորենք որ աս տեսակ ընկերութիւններ կազմեն, եւ կիրակնօրեայ դպրոցներ բանան Քրիստոնէական կոչման մէջ յառաջ երթալու իրենց միջոց, քանզի ուրախ ենք ըսելու որ ասիական մեզի բաւական հանգէտն փառաւոր կերպով կատարուի մեզի առեւ զաջալուծութիւն տուաւ սիրով եւ փառքով շարունակել մեր ընթացքը:

ՍԵՐՈՎԵՆ Ն. ՍՈՒՔԵԼԵԱՆ Ստաբաղար, մարտ 28, 1877

ԳՄԱՐԱՌՈՒՄԱԼԻՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Աւետարանի 10 թուոյն մէջ ողբից ըմպելիք գործածողներուն նկատմամբ յօդուած մը տեսնելով ուրախացայ եւ կրկին կրկին կարգացի գայն, սակայն յիշեալ յօդուածին հետեւեալ կտորին ճշմարտութեանը վրայ տարակուսեցայ:

«Ապա, սիրելի ընթերցողք, թերեւ ձեր բարեկամներուն հարսանեաց կամ ուրիշ մէկ խրախուժեանը հրաւիրուիք, եւ հոն արեւոյցից ըմպելիք բերուին, ինչպէս շատ անգամ կ'ըլլայ. դուք ոչ միայն դաւաթ մը անգամ առ անհոգութեան կամ ուրիշ որեւիցէ նկատման համար խմելու չէք, եւ ուրիշ խմելներուն նկատմամբ ալ անտարբեր ըլլալու չէք, այլ այն դարձելի գործն արգելելու համար ընելու էք ինչ որ խոհեմութիւնը կը թելադրէ ընել, ապա թէ ոչ քաջալերած կ'ըլլաք զինեմովութիւնը, եւ կ'իյնաք Աստուծոյ միեւնոյն անձնքին տակ որ զինեմովներուն դէմ տրուած է, եւ անոնց սպառնացուած պատժոյն հաղորդ կ'ըլլաք»:

Ես արդէն համոզուած եմ որ ողբից ըմպելիք շատ վնասակար աղբեցութիւն ունին աշխարհի վրայ, սակայն կը զարմանամ թէ Քրիստոսեայ կառավարութիւնները ինչո՞ւ օրէնքով արգելած չեն ողբից թուեալ ըմպելիքն չինել եւ ծախել, եւ վնասաշահութեան մեծ նիւթ ըրած են զանոնք:

Երկրորդ, կ'ուզեմ խնեալ թէ ինչո՞ւ համար Քրիստոս երբ հարսնիքի հրաւիրուեցաւ Կանա քաղաքը, հոն ոչ միայն չարեցից զինի խմել, այլ երբ ըսուեցաւ թէ «զինի չուտին», խմելու ջուրը զինի փոխելով իր հրաշագործութեան սկիզբն այն թուեալ ըմպելին ըրաւ: Եթէ սկիզբն

բէն աստուածային հրամանաւ արգելեալ էր զինի խմել, եւ մարդիկ այս արգելքին դէմ մեղանջելով ընդհանուր սովորութիւն ըրած էին ըմպելիք գործածել խմելու մէջ, կ'ըսեմ թէ Քրիստոս այս պատեհութիւնը զանց չէր ընէր, այլ կը յանգիմանէր զինի խմելները, եւ Սողոմոնէն ու մարգարէներէն վկայութիւն բերելով խապաւ կ'արգելէր զինի խմելը:

Քաւ լիցի ինձ հաւատալ թէ Քրիստոս քաջալերեց զինեմովները, սակայն կը սպասեմ որ մեկնուի թէ Քրիստոս ինչո՞ւ համար բոլորովին չարգելեց հարսանեաց մէջ զինի գործածելու սովորութիւնը: Երբ ըսուի թէ Քրիստոս ջուրը զինի փոխելով իր փառքը յայտնեց եւ այս պատճառաւ աշակերտները հաւատացին անոր, տակաւին կը մնայ բացատրել թէ Քրիստոսի իր փառքը յայտնելու եւ մարդիկ իրեն աշակերտ ընելու համար կը վայելէր թուեալ մեզի Սուրբ Աւետարանին մէջ մեղքին պատճառները կարել եւ ձգել մենք: «Թէ որ ալ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանիկա ու քեզմէ ձգէ» կ'ըսէ. սրտով չնայողն անգամ մարմնով մեղանջողի կտրէ կ'անցունէ: Ուրեմն, մէկն ինչպէս պիտի զիտնայ թէ զինի խմելը մեղք է, քանի որ Քրիստոս հարսանեաց ատեն զինի չինեց եւ տոմարեանց պատուիրանաց մէջ ալ արգելուած չէ զինի խմելը:

Ըսել չենք ուզեր թէ զինեմովութիւնը մեղք չէ, եւ արգելուած չէ Սուրբ գրոց մէջ: Անտարակոյս զինեմովութիւնը շատ գէշ եւ մեղքի առաջնորդ է: Եթէ զինեմովութիւնը Սուրբ գրոց մէջ արգելուած ալ չըլլար, բանական էակ մը կրնար փորձով տեսնել զինեմովութեան դէմ հետեւեալները: Սակայն կը խնդրուի որ Աւետարանի միջոցաւ պարզ բացատրութիւն տրուի թէ մարդիկ ինչ ընթացք բանելու են զինի խմելու նկատմամբ որ թէ իրենց եւ թէ այլոց վնասակար չըլլան:

ՈՄՆ Ի ԲՍԺԱՆՈՐԳՍՑ Գարամուսալ, մարտ 7, 1877

ՆՈՐ ՀՆԱՐԲ ՄԸ ԱՌԵՏԱՐԱՆԻՆ ԳՄԱՐՁՈՒԹԵԱՆ ԳԵՄ

Մեր գրեւոր մէջ Աւետարանական առանձին գերեզմանատուն չունենալով քան եւ չորս տարիէ ի վեր իրենց մեռելները կը թաղեն Լուսաւորչական եղբայր գերեզմանատան մէջ: Երբեմն Լուսաւորչականաց կողմէն սպառնալիք կ'ըլլար մեղ չթաղել մեր մեռելներն անոնց գերեզմանատան մէջ, բայց այս սպառնալիքը մինչեւ անցեալ տարի ի գործ դրուած չէր: Անցեալ տարի օգոստոս ամսոյն մէջ Աւետարանական եղբոր մը աղան մեռաւ, եւ երբ քանի մը եղբայրներ մեռելն առնելով գերեզմանատունը տարինք թաղելու համար, հոն ժողոված գտանք մեծ բազմութիւն մը որ կ'ընդդիմանար մեղ մեր մեռելը թաղել իրենց գերեզմանատան մէջ: Մենք ստիպուեցանք եղբուրները կատարութեան խնայելով խնդրել որ ինչ որ արժան է չուտով անօրինէ, որպէս զի մեր մեռելն անթաղ չմնայ: Կառավարութիւնը մարդ զրկելով հրամայեց Լուսաւորչականաց որ թոյլ տան մեղ մեռելը թաղել գերեզմանատան մէջ, բայց անոնք կառավարութեան հրամանին ալ անստատեցին: Վերջապէս միտարը, դատաւորն եւ ժողովը գերեզմանատունը գալով հրամայեցին մեղ մեռելը թաղել, եւ երբ մենք գերեզմանը կը փորէինք, իբր 500 հոգի մեր վրայ յարձակելով լրիջն եւ թին եղբայր ձեռքերէն առին, մէկը ինտեցին, եւ եղբայրներէն մէկ քանիները ձեռքեցին: Որպէս զի կենաց վնաս չըլլայ, ուղեղինք մենք փախչիլ անկէ, սակայն բազմութիւնն այնպէս սրտած էր մեր չուրքը, որ անկարելի եղաւ մեղ փախչիլ: Հոն տեսայ որ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլ 5 ըստ Յուն. և ապրիլ 17 ըստ Լատ., 1877

ԳԱՇՆԱԳԻՐԻՆ ԱՐԳԻՆԻՐԸ

Դաշնագիրը ստորագրուելէն չարախ մը ետքը Անգղիա եւ Րուսիա անհամաձայնութեան մէջ ինկան: Րուսիա կը կարծէ թէ դաշնագրի խնդրոյն մէջ Անգղիա Րուսիոյ հետ խաղ ըրած է, իսկ Անգղիա կը կարծէ թէ Րուսիա արդեւ իր Գարատաղի հետ հաշտութեան կնքուելը: Անգղիոյ եւ Րուսիոյ մէջ ծագած անհամաձայնութիւնը միայն բաւական է դաշնագիրը ստորագրուելու: Րուսական թերթերը կ'ըսեն թէ լատինները ցրուելու խնդիրը ստանալով յառաջ պիտի բերէ:

Ուստի երեւոյթները կը ցուցնեն թէ տարիէ մը հետէ վախճուած Եւրոպական պատերազմի մը եզերքը կը գտնուինք:

Րուսիոյ կայսրն իր թիկնապաշտերուն եւ ուրիշ մարդոցը հրաման ըրած է պատերազմի պատրաստուելու, վասնզի, եթէ պատերազմ ծագէ, կայսրը կը խորհի բանակին գլուխը գտնուել: Ջարը հրաման ղրկած է նաեւ Սեւ ծովու Րուսական նաւահանգիստներուն որ պատրաստ ըլլան ծովին յարձակմանց դէմ դնելու: Աւստրիա ալ կը պատրաստուի Պառիսի զօրք ղրկել եթէ պատերազմ բացուի, եւ Աւստրիոյ այս ընթացքը Սլաւեան յուզման մը դէմ զգուշութեան միջոց ձեռք առնելու համար է: Կ'ըսուի նաեւ թէ Անգղիա իր նաւատորմովը Կ. պոլիս պիտի ղրկէ:

ԳԱՐԱՏԱԳՐԻ ՀԵՏ ԲԱՆԱԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՎԱՍԺԱՆԸ

Գարատաղի հետ բանակցութեանց խնդիրը քանի մը օր առաջ ծերակուտի առջեւ հանուեցաւ, եւ կը լսենք թէ ծերակուտը որոշեց այն խնդիրը պաշտօնէից թողուլ: Ծերակուտի այս որոշումը երեւոյթնաւորական ժողովը հաղորդուեցաւ, եւ նոյն օրը Սաֆվթ փաշա եւ շէփուի փաշա ներկայ էին ժողովոյ: Սակայն երեսփոխանական ժողովը 65 քուէով մերժեց Գարատաղի խնդրոյն պաշտօնէից թողուլը, եւ ասոր վրայ Գարատաղի երեսփոխանը մեղհեցան: Զինադուրը չորեքշաբթի դիւշեր վերջացաւ:

Կայսերական զօրաց հրաման ղրկուեցաւ առ այժմ պաշտպանողական ղրկք բռնել, եւ վանել Գարատաղիներն եթէ անոնք յարձակում ընեն:

ԳԱՆԱՍՏ ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ ՆՊԱՏԱԳՐ

Երեսփոխանական ժողովը մէջ գաւառաց վարչական ժողովներուն նպատակին նկատմամբ երկու կարծիք յայտնուած են: Ոմանք ըսած են թէ ժողովը ժողովուրդը կը ներկայացնէ, ուստի եւ ժողովուրդէն ընտրուած անդամներէ միայն բաղկանալու է, եւ ժողովոյն նպատակն է հսկել ժողովուրդեան իրաւանց վրայ որ հաստատուած են երկրին օրէնքներովը: Միւս կարծիքը սա է թէ վարչական ժողովը կը ներկայացնէ կառավարութիւնը, ուստի եւ բաղկանալու է կառավարութեան պաշտօնատարներէն, եւ ժողովուրդեան կողմէն ընտրուած անդամներէ, եւ ժողովոյն նպատակն է ժողովուրդեան հաղորդել կառավարութեան հրամանները:

Առաջին կարծիքը սահմանադրական կառավարութեան նոր դրութեան համաձայն է, եւ հաստատուած է սա սկզբունք վրայ թէ կառավարութեան եւ ժողովուրդեան շահերը միեւնոյն են:

Երկրորդ կարծիքը կը յիշեցնէ հին դրութիւնը, եւ հաստատուած է սա տեսութեան վրայ, թէ կառավարութեան եւ ժողովուրդեան շահերը տարբեր կրնան ըլլալ:

Թէ երեսփոխանական ժողովը այս երկու կարծիքներէն որը պիտի ընդունի,

ժողովուրդեան համար կարեւոր խնդիր մ'է, եւ այս խնդրոյն որոշումն անձկութեամբ կը սպասուի, վասնզի վերջէթներու կազմութեան օրէնքն այս որոշման համեմատ ձեւ պիտի առնէ:

ԵՐԵՍՓՈՒՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Երեսփոխանական ժողովը երկուշաբթի եւ երեքշաբթի գաղտնի նիստ ըրաւ: Կ'ըսուի թէ երկուշաբթի օր ժողովը քննութեան առաւ Գարատաղի պաշտօնակները եւ մերժեց զանոնք 18 քուէի դէմ 65 քուէով:

Չորեքշաբթի օրը ժողովը հրատարակային նիստ ըրաւ, եւ դարձեալ քննութեան առաւ վերջէթներու օրէնքը, նաեւ յատուկ յանձնաժողովը կողմէն յիշեալ օրէնքէն վրայ արուած տեղեկագիրը: Յանձնաժողովը կ'առաջարկէր որ մալ միւտրին, խաչրիւրաթ քնաթիւղին եւ կրօնական գլուխները ի պաշտօնէ անդամ չհամարուին: Գաղափար ժողովներուն: Ոմանք առաջարկեցին որ միւտրիններն ալ ի պաշտօնէ անդամ չհամարուին յիշեալ ժողովներուն, եւ ասոր վրայ երկու վիճաբանութիւն եղաւ: Երեսփոխաններէն ոմանք ըսին թէ միւտրինները կրօնական գլուխներ չեն, ոմանք ալ պընդեցին թէ ժողովներուն մէջ ժողովուրդէն ընտրուել անդամներ միայն գտնուելու են: Ի պարտի միւտր ըսաւ թէ այն ժողովները կարգուած են կառավարութեան գործերը տեսնելու, տուրքերը հաւաքելու, ոստիկանութեան վրայ հսկելու եւ քաղաքային գործերը տնօրինելու համար, ուստի եւ ժողովը մէջ կառավարութեան պաշտօնատարը գտնուելու են, եւ ժողովը դեռեւս կողմէն անդամներ կը գտնուին տեղական գործոց վրայ խօսելու համար: Ասոր վրայ յիշեալ յօդուածը դարձեալ յանձնաժողովը ղրկել որոշուեցաւ, եւ վերջէթներու օրէնքին ընթացքովը շարունակուեցաւ, տէրթիւրտարներու եւ մուհասէպէճիներու վերաբերեալ յօդուածին վրայ ալ վիճաբանութիւն եղաւ: Երեսփոխան պաշտօնէից, Երեսփոխան վաշա յիշեալ օրէնքէն քանի մը մասերուն վրայ իր գաղափարները յայտնեց: Ժողովը նիստը վերջացուց ժամը վեցուկէսին, եւ յանձնաժողովներու բաժնուեցաւ:

Շաբաթ օր երեսփոխանական ժողովը վերջէթներու օրէնքը, եւ երէկ ժողովը ներքին կանոնադրութիւնն եւ դաւառներէն ղրկուած երեք աղբրաղբեր քննութեան առաւ: Այսօր ժողովը թաղապետութեանց (պէշէտլեյ) օրէնքը քննութեան պիտի առնու:

Երեսփոխանական ժողովը հաւանութեան քուէ տուաւ դաշնագրի խնդրոյն մէջ պաշտօնէից բռնած ընթացքին նկատմամբ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Քիւմալ պէշի դաւաճանութեան դատը երեքշաբթի օր տեսնուիլ սկսաւ:

Թղթատարութեան պաշտօնէին նախորդ օգնական իզլէթ պէշ թղթատարութեան պաշտօնէից կարգուեցաւ:

Երկուշաբթի օր Սաֆվթ փաշա չըջաբերական թուղթ մը ղրկեց Եւրոպական տէրութիւններ ի պատասխանի դաշնամար: Յիշեալ չըջաբերականին մէջ բողոք եղած է որ Բ. դուռը դաշնագրի նկատմամբ կատարուած բանակցութիւններէն դուրս ձգուեցաւ: Բնութեւն նաեւ թէ Բ. դուռը բարեկարգութիւնները կատարելու վրայ է, եւ չլսանալ որ Եւրոպայի տէրութեանց ղեկավարներն հսկեն անոնց վրայ, բայց կը մերժէ ամէն տեսակ միջամտութիւն: Գարատաղի հետ բանակցութիւնները հաշտութիւն կերպով յառաջ կը տարուին, բայց Րուսիոյ բանակին ցրուելը Գարատաղի հետ կատարուած բանակցութիւններուն յաջող ելքէն կախում ունենալու չէ: Բ. դուռը դեռ պահ պիտի ղրկէ փեղրապուրի, երբ Րուսիա իր բանակը ցրուէ:

Աթլէնքէն զարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ, կառավարութիւնն ամէն հնարաւոր միջոց կը գործածէ Կրեմլի ժողովուրդը դէմ ընելու համար:

Աղբրանուարացի դաւառին ոստիկանները բանակը կը ղրկուին, եւ անոնց տեղ Բրիտանականներէն ոստիկաններ կ'առնուին:

Պոմերիոյ ապստամբներն երկու հարիւր մինչեւ չորս հարիւր հոգիէ բաղկացեալ փոքր խումբերու բաժնուած են: Բաւոր ապստամբներն Աւստրիոյ սահմանակից լեռանց մէջ ամրացած են, եւ եթէ յաղթուին Օմանեան զօրքէն, Աւստրիոյ հողը փախչելով կ'աղաթին: Զէնքի տակ դաշնուած ապստամբաց թիւն 5,000 ի կը հասնի: Տէսթուովիչ ապստամբացեալ թրափը դաւառին մէջ է, եւ հաղորդակցութիւն ունի Հէրսէքի ապստամբաց հետ: Հէրսէքի մէջ իւր 1,000 ապստամբներ կան, որոնցմէ իւր 600ը Գարատաղի սահմանին մօտ, եւ մնացեալն Աւստրիոյ սահմանին մօտ են: Սիւլէյման փաշա իւր 20,000 զինուոր ունի Հէրսէքի մէջ, եւ շատ պահապան զօրք կը միանան անոր զօրաց հետ:

Ալպանիոյ Միրտիզները մօտերս իրենց զբաղի ցեղերուն հետ մեծ ժողով մը ըրին: Կ'ըսուի թէ ժողովին ներկայ եղող երեսփոխանաց թիւն 5,000 է: Եւ Եր: Յայանի չէ թէ այն ժողովը ինչ որոշում տուած է, բայց որոշման ինչ տեսակ ըլլալը կրնայ դատուիլ սա գէպէն թէ, ժողովը վերջնական անմիջապէս ետքը Միրտիզները Թուրքիոյ Շարտայի բանակին մէջ գտնուող Միրտիզ հաղարապետ Կիւկայի տունն այրեցին:

Մօտերս Կ. պոլսոյ մաքսատան մէջ երկու անձինք բռնուեցան, որ իրենց վերայ շատ մը Պոլիարեքին նամակներ պահած էին մեծ զգուշութեամբ: Կարծուեցաւ թէ այն մարդիկն ապստամբական յանձնաժողովներու անդամ էին, բայց երբ նամակները կարդացուեցան հասկցուեցաւ թէ անփաստ նամակներ էին անոնք, եւ այն մարդիկը փոթացի ծախք չտալու համար միայն պահած էին յիշեալ նամակները:

Անցեալ դեկտեմբեր ամսոյ մէջ Ղալաթիա Յոյն վաճառական մը անցայտ եղաւ: Հիմա այլ եւ այլ խուզարկութիւններէ հասկցուած է թէ յիշեալ անձն իր ստակին համար սպաննուեցաւ այն խանին բռնակիրներէն, ուր էր իր սենեակը: Յիշեալ անձն սպանուեցէն հինգը Հոյ էին, եւ մին Բիւրա էր:

Պատերազմի նշանները կ'աւելան: Եւրոպայի մէջ պատերազմն անհրաժեշտ կը համարուի: Րուսիոյ կայսրը հրաման ըրած է որ բոլոր բանակը պատերազմի պատրաստ ըլլայ: Պոլսոյ դեսպանատան եւ հիւպատոսարանի մարդոց ալ Րուսիոյ կառավարութիւնէն հրաման եկած է ատիկ մեկնելու պատրաստ ըլլալ, եւ Րուսիոյ հիւանդանոցին հիւանդները Գերմանիոյ հիւանդանոցը փոխադրուած են: Այստեղ էքրէմ վարձա գացած է, եւ Թուրքիոյ բոլոր զինուորական հրամանատարներուն հրաման եղած է ամէն կերպով պատրաստ եւ արթուն ըլլալ: Եւրոպայէն զարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Միջերկրական ծովուն Ամերիկայի նաւատորմին հրաման եղած է Պոլիս երթալ: Այս լուրը սխալ է, եւ առաջ եկած է սա գէպէն որ Ամերիկայի պատերազմական նաւ մը ճամբայ ելած է Պոլիս գալու եւ հոս դեսպանին հրամանին տակ մնալու փոխանակ այն նաւուն որ հիմա հոս է:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Անցեալ շաբաթ երկու զրահաւոր նաւեր ղրկուեցան ի Դանուբ — Թնդանթարանի հրապարակը դրուած մեծ թնդանթարան համար մօտերս 70 զնդակ ծախու առնուեցաւ: Յիշեալ զնդակներէն ամէն մէկը 20 իրաքի արծիւ: Գաղափար թնդանթարան:

Ըր կրնան գնդակ արձակել Պոսթորի նեղքին մէկ կողմէն միւս կողմը եւ անկէ ալ մէկ ժամ հեռու: Պատերազմական ծախուց օգնութեան համար բացուած հանգանակութեան գումարը մինչեւ ըստ Յունաց մարտ 1 ին 41,445,654 դահեկանի հասած էր: Պատերազմական ծախուց համար մօտերս Անգղիայէն 20,000 ոսկի ալ ընդունուեցաւ: Պիզմարը իշխանը մինչեւ օգոստոս իր պաշտօնէն բացակայ գտնուելու հրաման առած է: Եւրոպայի բոլոր մեծ քաղաքաց պորտաները մեծ երկիւղի մէջ են պատերազմի համար: Թուրքիոյ զօրքը պարպած են Տրինա դետին մէջի կղզիները որ Սերուիոյ կը վերաբերին: Յունաստանի առաջին կարգի պահեստի զօրաց հրաման տրուած է գալ ամիս զէնքի տակ ժողովուրդ: Կ'ըսուի թէ ընկերութիւն մը խաղատուն մը բանալու պայմանաւ յանձն առած է տարին 250,000 լիրա վճարել խմորին, եւ իր կողմէն սաղ նաեւ Գահիրէի թաղապետական ծախքերը:

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգղիոյ լրագիրները Րուսիոյ Թուրքիոյ նկատմամբ բռնած ընթացքը չեն հաւեր: Յիշեալ լրագիրը կը հրաւիրեն Րուսիա որ իր բանակը ցրուէ ըստ դաշնագրին: Լոնտոն Թայմը կ'ըսէ որ եթէ Րուսիա շարունակէ իր թնդանական ընթացքը Թուրքիոյ նկատմամբ, Եւրոպայի կամաց հակառակ գործած պիտի ըլլայ: Բալ Մալ Կալէթ խրատ կուտայ Անգղիոյ, Գերմանիոյ եւ Աւստրիոյ որ նոր դաշնակցութիւն մը կազմեն, որ երեք կայսերաց դաշնակցութեան տեղը բռնէ:

Խաղիոյ կառավարութիւնը Պապին դէմ թնդանական ընթացք բռնել սկսած է: Ալպային ժողովը մօտերս այնպիսի օրէնքներ դրաւ, որ կըրեականաց իրաւունքները շատ կը սեղմեն, այս պատճառաւ կը վախցուի թէ կառավարութեան եւ կղերականաց մէջտեղ վէճ պիտի ծագի, ինչպէս ծագեցաւ Գերմանիոյ մէջ եւ երկուր ժամանակ տեւեց:

Կ'ըսուի թէ Րուսիոյ սահմանագլուխը գտնուած Րուսական բանակը հիմա 400,000 հոգիէ կը բաղկանայ: Յիշեալ բանակին յառաջագահ զօրքը հեծեալօր են, եւ այս հեծեալօրաց զրեթէ կէսը Մահմետական է:

Ապրիլ 14 եւ 15 ին Եւրոպայէն զարնուած հեռագիրը կը ծանուցանեն թէ անցեալ ուրբաթ օր Անգղիոյ խորհրդարանին մէջ Թուրքիոյ գործոց վրայ վիճաբանութիւն եղաւ, եւ պաշտօնէից յայտարարեցին թէ Անգղիա խաղաղութեան նկատմամբ իր վերջին խօսքն ըսած է, թէ կառավարութիւնը պատերազմական աշխարհակարութիւն պիտի չբռնէ, եւ Անգղիա միայն այն ատեն իր սուրը պիտի մերկանայ երբ իր շահուն կամ պատուին դէմ յարձակում մը ըլլայ: Ուրբաթ օր Միւսիւրիս փաշա առաջարկեց լրատ Տէրպիլի ջնդէլ դաշնագիրը, Լորտ Տէրպիլ պատասխանեց թէ Անգղիա եւ Թուրքիա իրարմէ այնչափ տարբեր կը խորհին այն խնդրոյն վրայ որ պարտալ է այս մասին խօսիլ: Լորտ Տէրպիլ ըսաւ նաեւ որ ինքը այլեւս միջոց մը չտեսներ պատերազմն արգելելու: Միւսիւրիս փաշա պատասխանեց թէ Թուրքիա կ'ընտրէ պատերազմը քան զհաշի իր անկախութիւնը:

Րուսիոյ կայսրն այսօր Քիւնէվ պիտի գայ բանակն այցելելու:

ԵԼԵԻՄՏԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏԱՐԵՐ			
Ապրիլ 4/16, 1877			
Կանոնադր	10. 3 1/2 լուս. երկաթ, բաժնիք	28 1/2	
ԳՐԱՄԲ, Օմմ, լիւրան 400 էն			
Մէքսիկայի	10 1/2	Րուսիոյ բոլ	89 1/2
Թղթապարտ	16 1/2	Նաւորէն	87 1/2
Պիզմա ստակ	170	Անգլ. լիւր	109 1/2
Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն կ'միադիր ձ. Բ. կրին			
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՆ			
Չագմագմար, Յակոբեան խան, Թիւ 12.			